

ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԾՈՅՑԱՆ

ԻՄԱՍՏՈՒՆ ԵՎ ՆՎԻՐՅԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԸ*

«Դևոքով անցնիլը ունի մեկ անուն՝ սրբապիհող,
ոգեշունչ և բարձրահայեաց՝ անմահութիւն»:

ԳԱՐԵԳԻՆ Ա

Բարձրահայաց անմահության հետքով անցավ երկրային կյանքի 67-ամյա իր ճանապարհը Գարեգին Առաջին հոգելույս Հայրապետովը, որ յորահափուկ, անձնադրոշ կյանքով զգաց, խորհեց և գործեց Աստծո և հայության համար: Նա ճշմարիք հոգևորական էր, մեկ և ընդհանրական Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու անձնիր պատրարքայիլը, որ ինքնանվիրմամբ ձգիրեց իրականություն դարձնել Կաթողիկոսական Աթոռուների միասնության գրեսիլը: Նա մեր մեկ՝ Ընդհանրական Եկեղեցու սրբազնասուրբ Սեղանի առաջին պատրարքազիչն էր, այդ անավարդ պատրազի առաջին սաղմոսերգուն:

Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ կարճապէն գահակալության շրջան ունեցավ Ա. Էջմիածնում: Այդ կարճ ժամանակահարվածում արդյունավետ գործունեությամբ շնչացրեց Հայ Առաքելական Եկեղեցու անդաստանը, վերանորոգեց, նոր կյանք ու լիցք հաղորդեց նրա առաքելությանը:

20-րդ դարավերջի հայ երևելի հոգևորականն ու մեծ միավորականն անժամանակ արժեքների մի արդացողութ էր ժամանակի մեջ, որի լույսը որքան հեռանում, այնքան ահազնանում ու զորեղանում է:

Այսօր ընդամենը 70 տարեկան է նա՝ աշխարհի երևելիներից մեծարանքի արժանացած, աշխարհի գիրունների հետ բանավեճ վարած մեր իմաստուն ու նվիրյալ, մեսրոպանուն ու շքեղաչուր հովանականի:

Բարձրյալն Աստված Կաթողիկոսների դարադրուի երթում նրան ուհանորդի հայոթական քայլը շնորհեց՝ Անկախության Հայրապետ հոչակելով՝ կորուսյալ երկրի աստրանոհական Աթոռուն 18 տարի գահակալած մաշտոցազգյաց կաթողիկոսին:

Նրա իմաստնությունը ստուկ գրեսական չէր, գիրելիքների հանրագիրարանային պաշարը՝ ոչ թանգարանային: Անսակարկ նվիրումով ու անսպառ եռանդրվ նա կյանքի էր կոչում ամբարձ իմաստնությունը: Իր կյանքն ինքնին իմաստնության ու նվիրումի համագոյակցում էր. անսահման նվիրումի բարբառուն վկաները նրա կարարած գործերն են, իսկ հզոր ճարդասանությունը՝ իմաստնության արդահայդման

* Բանախոսություն՝ կարդացված Վեհարանի հանդիսությունների դաիլիճում Գարեգին Առաջին ծննդյան 70-ամյակին նվիրված հանդիսությանը:

ձևը: Նվիրումը նրա եռթյան ներքին կոչնակն էր, որ փրկած էր ի վերուստ, իմաստ-նությունը՝ այդ նվիրումի պրոտեները:

Անմեկնելի ներշնչանք ուներ, հզոր երևակայություն: Անձնապաշտ չէր և անքան-քարարաքույց կերպով իր անսպառ իմացությամբ հարստացնում էր մեր ներաշխարհը, պայծառացնում մեր միտքը: Թումանյանական գրություն կար նրա մեջ. մեր ազգային զգացումների, հոյզերի ու խոհերի, ժողովրդական իմաստնության խփացում էր:

Երբեք չենացավ իր արմագիներից, չդավաճանեց ազգային ոգուն: Աշխարհում ամենասիրած վայրը Գալաքուրանում Ծովի թաղի իր այգին էր՝ թզենու հովը, մտերմիկ զրոյցի սրբամուր միջոցը՝ քեսապօքը՝ Քեսապի բարբառը, սիրու հովացնող ջուրը՝ Կասիոս լեռն ի վեր Սուսիի աղբյուրը, մշտահունչ խրաբարուն՝ դարեվանքի վերպառությունը՝ «Խորի՛ և միդի՛»:

Արևմուտքում անցնելով հոգևոր և իմացական կյանքի դպրոցները՝ Արևելքը կրեց իր մեջ, հղկեց ազգային պրիսմակով՝ դառնարով արևմբյան և արևելյան արժեքների կապարյալ համադրություն, ներդաշն հոգևոր-բարոյական, իմացական կառույց: Որքան հսկակ էր միտքը, այնքան ջերմ էր սիրու: Հաղորդական էր, մափշելի, պարզ, սակայն միաժամանակ վեհ և անհասանելի իր անսպառ ու խորախորհուրդ եռթյամբ: Որպես ասրվածային բարձրարվեստ սիրեղագործություն՝ աչքի պես պարզ էր ու աչքի պես բարդ:

Հոգևորականի կապարյալ փիպար էր, որ իր անձնականի դիմաց գրել էր՝ բացակա: «Ես հովիվ եմ», - ասում էր նա, և անանձնական նվիրումով մղվում դեպի իր հովը: Որպես ծշմարիկ վարդապետ՝ Վիսուի օրինակով ելավ ժողովրդի մեջ, քարոզեց նրա համար, սիրեց նրան՝ մովիկից ապրելով նորանկախ հանրապետության դարստամ գույները: Որպես հորդահոս ջրվոր՝ ուզեց թափանցել անհավաքության երկարամյա թմբիրի միջով, կամեցավ փիլտեցնել ասրվածամերժ հոգիները: Զրոյություն շռնդալից էր ու անսպասելի, կորդացած հոգիները՝ անպարհասպ ոռոգման... Սակայն այսօր շափերի հոգիներն են ասրիճանաբար ներծծվում կենսապարզն զորությամբ այդ և ըմբռնում ան-ժամանակ իրողությունների իսկական արժեքը:

Մեզ բախվ վիճակվեց ծնրադիր աշակերպելու նրան, նրա մյուտնաբույր մարդների միջով զգալու ասրվածային օրինության ու հոգևոր դվշության բերկրանքը, ապրելու հավաքքի ուխտի վերանորոգությունը: Նրա հերթ յորաքանչյուր հաղորդակցություն կյանքի մեծագույն դաս էր ուսյալի համար: Նա վերաբերեց եջմիածնադիր ուխտը մեր, վերաբերելորեց անասրվածությամբ կողպված լուսավորչապուր հավադքը:

Նա Ավելպարանի թարգմանն էր, Ս. Մեսրոպի սուրեանդակը, ոսկեղենիկ մեսրոպյան լեզվի գանձապետը, որ լավագույն հնչեցրեց այն աշխարհի դարբնությունը: Ուսկերերան քարոզիչ էր և իր խոսքը որպես պարագաի նշխար բաժանեց ամենիս:

Ինչպես Մովսեսը 40 դարի շարունակ իսոսեց և առաջնորդեց իր ժողովրդին դեպի Ավելպար Երկիր և Մովսեսի լեռան վրա մի վերջին հայացք զցելով Ավելպար

Երկրի հորիզոնին՝ փակեց աչքերը, այդպես է Գարեգին Ա-ն 40 տարի աշխարհին խոսեց Քրիստոնյա Հայաստանի 1700-ամյակի մասին՝ սևեղով բոլորի ուշադրությունը ի Հայաստան, ի բնեթենմյան միաձնաէջ մայրամսուր, սակայն իր աչքերը փակեց այդ մեծ գոնակապարության նախաշեմին Սուրբ Էջմիածնում՝ դեռևս չողորած իր 67 տարին:

Սիրում էր Վեհափառը օշականյան սրբավայրը և հաճախ իր այցելություններով իմաստավորում մեր օրը, երջանկություն պարզեւում մեզ: Խսկ յուրաքանչյուր այցելություն նրա համար մի մրմբուք էր՝ ամենահայ հայի գերեզմանը բարեզարդելու, մեսրոպյան ոսկեդարը մեր օրերում վերարթնացնելու մրահողությամբ: Ջերմեռանդությամբ բարենորոգեց սրբարանը, եկիմնեց «Մեսրոպ Մաշտոց» դպրագունը: Որպես սրբացավ դանդեր՝ ուրախանում էր աշխափանքների հաջողություններով: Մեր երազներից, խոհերից ու խոկումներից, անքուն օրերի խոնջանքից ծնված այդ դպրափան կամարների ներքո այսօր մենք գետնում ենք Գարեգին Հայրապետին, զգում նրա կենդանի շունչը:

Օշականում, որպես Ընդիհանրական Հայրապետի, անդրանիկ այցելության առիթով մի հուշակարող ենք կանգնեցրել, որի բացման արարողության ժամանակ ասաց. «Այս քարը այլևս դադարում է քար լինելուց, այն խոսում է, որովհետք անլոելի զանգակափուն է»: Այսօր Սուրբ Էջմիածնի զանգակափան կողքին գրնվող նրա լուսահորդ շիրմը դադարում է քար լինելուց: Մեզ համար այն անլոելի զանգակափուն է, և այդ զանգակափան կոչնակները պիտի հնչեցնենք մենք՝ նրա անմահության վկաները, նրա երախտագեր ժառանգորդները:

- Որպե՞ն հանդիպենք նրան,- կիարցնենք, և նա կլա իր պարասխանը.

«Ես եռն եմ, Օշականի մեջ, իմ արժանի առաքեալին և իմ Աւելքարանին հայերէնախօսութեան սկզբնածին վարդապետին մեսրոպարոյր ու յաւերժաբարբառ շիրմին մօպ»:

Այսօր բարձր գնորինությամբ մեծությունը արժեվորող ճշմարդախոհ Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հնչեցին Մայր Տաճարի կոչնակները, Սուրբ և անմահ Պատարագով վերակենսավորվեց մեր մեջ Գարեգին Մաշտոցաշունչ Կաթողիկոսը և ի ոգեկոչումն նրա՝ կապարվեց հոգեհանգստի կարգ և հիշափակի հանդիսություն:

Եկեք մենք էլ մեսրոպաբարբառ աղոյքներ առաքնենք Երկինք՝ Երանաշնորհ Հովվապետի հոգու խաղաղության համար, որը մեր միասնության, մեր համերաշխության, մեր փոխըմբռնման ու համերայրության, մեր կիսար երազների իրականացմանը նվիրված առաջյալը եղավ: